Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 10-ի N 102 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջկառավարական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև ռազմատեխնիկական բնագավառում համագործակցության հարցերը համակարգելու նպատակով:

2. Սույն կանոնադրությամբ սահմանվում են հանձնաժողովի հայկական կողմի նպատակները, գործառույթները, իրավունքները, ձևավորման կարգը և գործունեության կազմակերպումը:

3. Հանձնաժողովի հայկական կողմը հասարակական հիմունքներով գործող մարմին է, որն իր իրավասության սահմաններում կատարում է աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության օրենքներին այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովի հայկական կողմն իրականացնում է 1999 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության մասինե

պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր), 2002 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև սպառազինության և ռազմական տեխնիկայի փոխադարձաբար մատակարարումների մասինե համաձայնագրով (այսուհետ՝ համաձայնագիր), 2006 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասինե համաձայնագրով (այսուհետ՝ համաձայնագիր) նախատեսված և (կամ) հիշյալ միջազգային պայմանագրերի իրագործմանն ուղղված հետևյալ գործառույթները՝

1) ռազմատեխնիկական համագործակցության կոնկրետ ոլորտների բովանդակության սահմանում և համաձայնեցում համապատասխան ծրագրերի և պլանների մշակման ու ընդունման ճանապարհով.

2) պայմանագրի և համաձայնագրի դրույթների կատարման համար ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքի հսկում և համադրում լիազորությունների շրջանակում.

3) ռազմական նշանակության արտադրանքի ստեղծման ուղղությամբ համատեղ ձեռնարկությունների կազմավորմանը և գործունեությանը աջակցություն.

4) ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում ծագող վեճերի, տարաձայնությունների և խնդիրների լուծմանն աջակցություն՝ խորհրդակցությունների միջոցով.

5) երկու պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության ընդլայնման ուղղությամբ առաջարկությունների և հանձնարարականների մշակում.

6) ռազմատեխնիկական համագործակցության ոլորտների և ուղղությունների զարգացմանը և իրագործմանն աջակցություն։

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5. Հանձնաժողովի հայկական կողմն իր գործառույթների իրականացման համար իրավունք ունի՝

1) ընդունելու որոշումներ իր աշխատանքին առնչվող կազմակերպական և ընթացակարգային հարցերի մասին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու մարմինների քննարկմանը ներկայացնելու իր գործառույթների իրականացման վերաբերյալ առաջարկություններ.

3) հանձնաժողովի հետ պայմանավորվածությանը համապատասխան՝ ստեղծելու համատեղ մշտական և ժամանակավոր հիմունքներով գործող աշխատանքային մարմիններ.

4) կազմակերպելու խորհրդակցություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործադիր իշխանության մարմինների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կազմակերպությունների ղեկավարների և փորձագետների, ինչպես նաև գործարար շրջանակների ներկայացուցիչների (կամավորության սկզբունքով) մասնակցությամբ։

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԿԱԶՄԸ

6. Հանձնաժողովը կազմվում է Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության ներկայացրած անդամներից, որոնք նշանակվում են երկու կողմից՝ պահպանելով հավասար մակարդակներով ներկայացուցչությունն ապահովելու սկզբունքը։

7. Հանձնաժողովի հայկական կողմը բաղկացած է նախագահից, նախագահի տեղակալից (Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ), անդամներից, քարտուղարից (Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացուցիչ)։

8. Հանձնաժողովի հայկական կողմի կազմում ընդգրկվող գործադիր իշխանության և այլ մարմինների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ նշանակելով հանձնաժողովի հայկական կողմի նախագահին (համանախագահին) և քարտուղարին։

Գործադիր իշխանության և այլ մարմինների ղեկավարները Հայաստանի Հանրապետության վարչապետին, հանձնաժողովի հայկական կողմի նախագահին (համանախագահին) և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը տեղեկացնում են իրենց ներկայացուցիչների նշանակման և փոփոխության մասին։

9. Հայաստանի Հանրապետության վարչապետը հանձնաժողովի հայկական կողմի նախագահին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահի համաձայնությամբ։

10. Հայաստանի Հանրապետության վարչապետը հանձնաժողովի հայկական կողմի քարտուղարին նշանակում է հանձնաժողովի հայկական կողմի նախագահի առաջարկությամբ։

11. Հանձնաժողովի հայկական կողմի նախագահը՝

1) հանձնաժողովի համանախագահն է.

2) համակարգում է հանձնաժողովի հայկական կողմի գործողությունների պլանում ներառված միջոցառումների իրականացման աշխատանքները.

3) վարում է հանձնաժողովի հայկական կողմի նիստերը.

4) հանձնաժողովի հայկական կողմի անդամների միջև բաշխում է պարտականությունները և նշանակում պատասխանատուներ՝ հանձնաժողովի հայկական կողմի գործառույթներից ու խնդիրներից բխող հարցերի պատրաստման համար.

5) հսկողություն է իրականացնում հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման նկատմամբ.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության և հանձնաժողովի հայկական կողմի որոշումներին համապատասխան իրականացնում է այլ գործառույթներ։

12. Հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն, առանց հատուկ լիազորությունների, բանակցություններ վարելու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կնքման և այդ պայմանագրի տեքստի փոխհամաձայնեցման շուրջ։

13. Հանձնաժողովի հայկական կողմի քարտուղարը պատասխանատու է հանձնաժողովի հայկական կողմի գործունեության կազմակերպման, հանձնաժողովի հանդիպումների համար փաստաթղթերի նախապատրաստման, հանձնաժողովի հայկական կողմի նախագահի՝ հանձնաժողովի գործունեության հետ կապված հանձնարարությունների կատարման և հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքին հետևելու, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ կազմակերպչական և վարչական հարցեր լուծելու համար։

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Բելառուսի Հանրապետությունում՝ հանձնաժողովի ընդունող կողմի նախագահի նախագահությամբ։

15. Հանձնաժողովի հայկական կողմը գումարում է նիստեր՝ նախապես համաձայնեցված պարբերականությամբ և ժամկետներում՝ ըստ գործողությունների պլանի։

16. Գործողությունների պլանը մշակվում է յուրաքանչյուր տարվա համար հանձնաժողովի հայկական կողմի կազմում ընդգրկված անդամների առաջարկությունների հիման վրա։ Գործողությունների պլանը ներառում է միջոցառումների իրականացման համար հստակ ժամանակացույց և սահմանում դրանց համար պատասխանատուներին։ Գործողությունների պլանը հաստատվում է հանձնաժողովի հայկական կողմի նախագահի կողմից։

17. Գործողությունների պլանում ներառվում են այն հարցերը, որոնք պետք է քննարկվեն հանձնաժողովի հայկական կողմի և իր աշխատանքային մարմինների կողմից՝ նշելով դրանց նախապատրաստման կարգը, քննարկման ժամկետները, ծավալը և նյութերը Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ հանձնաժողովի հայկական կողմի քննարկմանը ներկայացնելու ժամկետները։

18. Հանձնաժողովի հայկական կողմի նիստը համարվում է իրավազոր՝ հանձնաժողովի անդամների երկու երրորդի մասնակցության դեպքում։

19. Նիստի օրակարգի յուրաքանչյուր հարցի մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի հայկական կողմի նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ։

20. Ընդունված որոշումներն ստորագրում է հանձնաժողովի հայկական կողմի նախագահը։

21. Լրացուցիչ հաստատում պահանջող կամ իրագործման համար ներպետական իրավական ակտի ընդունում պահանջող որոշումներն ուժի մեջ են մտնում համապատասխանաբար՝ լրացուցիչ հաստատվելուց կամ համապատասխան ակտ ընդունելուց հետո։

22. Հանձնաժողովի հայկական կողմի նախագահը յուրաքանչյուր տարին մեկ անգամ Հայաստանի Հանրապետության Նախագահին և Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացնում հաշվետվություն հանձնաժողովի գործունեության վերաբերյալ և յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն է ներկայացնում տեղեկատվություն իրենց ընթացիկ գործունեության վերաբերյալ։

23. Ընդունված որոշումներն իրագործելու նպատակով հանձնաժողովն իրավունք ունի ստեղծելու ժամանակավոր և մշտական մարմիններ՝ ենթահանձնաժողովներ, հանձնախմբեր կամ աշխատանքային խմբեր։

24. Հանձնաժողովը որոշում է մշտական և ժամանակավոր մարմինների նպատակները, լիազորությունները և կազմը։ Այդ մարմինները միայն հանձնաժողովի կազմից ձևավորվելու դեպքում դրանց ստեղծման և անհատական կազմի հաստատման համար լրացուցիչ ներպետական ակտի ընդունում չի պահանջվում։

25. Հանձնաժողովի նիստերի և նրա մշտական ու ժամանակավոր մարմինների գործունեության հետ կապված ծախսերը հոգում է ընդունող երկիրը՝ յուրաքանչյուր կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով։

26.Հանձնաժողովի նիստերին մասնակցության համար ժամանած պատվիրակությունների կեցության, սննդի և տրանսպորտային միջոցների ապահովման ծախսերը հոգում է ընդունող կողմը։

27. Ճանապարհածախսը և հանձնաժողովի հանդիպման ընթացքում մասնակիցների, ինչպես նաև մշտական և ժամանակավոր մարմինների անդամների՝ ընդունող երկրում գտնվելու հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման համաձայն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ